ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս աշխատութեան առաջին հատորի սկզբում արդէն գրուած է ամբողջ գրքի յառաջաբանը. գրուած է այն, գրեթէ, 15 տարի առաջ, երբ մեծագոյն դժուարութիւններով յաջողեցաւ տպագրութեան յանձնել այդ մասը: Ցապաղումը երկրորդ եւ երրորդ մասերի տպագրութեան, հետեւանք չէր աշխատութեան անպատրաստ լինելուն, այլ այն պայմանների, որին ենթարկուած է եղել հեղինակը: Նախ նիւթական միջոցների պակասութիւն, այսպիսի մի մեծածախս գործ տպագրելու համար, եւ ապա ժամանակի եւ դէպքերի բերմամբ աստանդական մեր կեանքը վերջին տասնեակ տարիների ընթացքում:

Բայց «չիք չարիք առանց բարեաց» խօսքը արդարանում է եւ այստեղ: Այդ յապաղումն էր պատճառ, որ 1934 թուին երկրորդ եւ երրորդ հատորներն ուղարկեցինք Երուսաղէմի «Թարգմանչաց–Դուրեան» մրցանակաբաշխութեան, որ եւ գնահատուեցաւ այնպիսի բանդէտ անձնաւորութիւնների կողմից, որպիսիք Տ. Թորգոմ Պատրիարքն էր, եւ մեծ գիտնական Նիկողայոս Ադոնց, եւ արժանացաւ մրցանակաբաշխութեան, որ հեղինակի համար մխիթարութիւն եւ բարոյական վարձատրութիւն էր: Նրանց գնահատականները կրցուում են այս հատորին այս Յառաջաբանից յետոյ, ուր բացատրուած են այս աշխատութեան ուսումնասիրութեան մեթոդները, բովանդակութիւնն ու նպատակը:

Ակնարկուած յապաղումը աւելի կ'երկարէր, եթէ աղնուափայլ Տիկին Արմենուհի Միքայէլ Միսիրեան Բրիւսելում, մեր այնտեղ այցելութեան ժամանակ, իբրեւ նուիրակ հանգուցեալ կաթուղիկոսի, ինքնաբերաբար եւ բոլորովին անակնկալ մեզ համար, չտրամադրէր մի կարեւոր գումար մեր գիտական աշխատանքների համար, որ մենք գործադրել ենք Խաղբակեանց Բ. եւ Գ. հատորների տպագրութեան համար: Այս նուիրաբերութեան արժէքը հասկանալի է ինքնըստինքեան, ուստի եւ աւելորդ ներբող հիւսել այդ մասին:

Ամբողջ աշխատութիւնը բաղկացած է երեք հատորից, ինչպէս յայտնուած է առաջին հատորին կից Յառաջաբանի մէջ, մէկը միւսի հետ սերտ կապուած եւ իրար լրացնող: Առաջին հատորի մէջ Պռոշեանց տոհմի քաղաքական եւ շինարարական դերն է լուսաբանուած, որ տպուած է Էջմիածնում մեր անձնական ծախսով, երկրորդի մէջ նրանց իշխանութեան եւ հովանաւորութեան տակ ծաղկած հոգեւոր եւ մշակոյթի կեդրոնները, որ տպագրուած է Երուսաղէմ, եւ երրորդը այն կարեւոր նիւթերն ու աղբիւրները, որոնց հիման վերայ կատարուած է առաջին երկու հատորների ուսումնասիրութիւնը: Այս Գ. հատորը բաժանուում է երեք մասի. Յաւելուած Ա. արձանագրութիւնները, Յաւելուած Բ. ձեռագրական յիշատակարանները, եւ Յաւելուած Գ. մատենագրական պատառիկներ կամ ցուցումներ հեղինակների աշխատութեանց՝ ձեռագիրների մէջ:

Առաջին եւ երկրորդ հատորների համար ասելիք չունինք. ընթերցողներին կը մնայ դատել, ուղիղ կամ սխալ համարել, իրական կամ ենթադրական մեր համադրութիւններն ու եզրակացութիւնները: Բայց երրորդի համար ունինք մի քանի ցուցումներ եւ նկատողութիւններ: Ըստ հնարաւորութեան աշխատել ենք մէջ բերուած արձանագրութիւնները, ձեռագրական յիշատակարաններն ու մատենագրական հատուածները տալ բնագիրներին հարազատ կերպով, բայց, տարաբաղդաբար, տեխնիկական պատճառներով, անհնարին է եղել լիովին հասնել այդ ցանկութեան: Մեր խօսքը վերաբերում է, յատկապէս, արձանագրութիւնների կցումներին (ligature), որ միայն նշանակել ենք եւ մատնացոյց արել տպագրութեան մէջ չեղագրով, առանց կարող լինելու նրանց նոյնատիպ ձեւերը տալ: Պէտք էր, գոնէ, միատեսակ կցումների համար կաղապարներ պատրաստել, որ մեր կարողութիւնից վեր էր: Ցաւը դարմանել կարելի է մասամբ այն արձանագրութիւնների նկատմամբ, որոնց նոյնատիպ պատկերն ունինք, հետաքրքրուող ընթերցողին թողնելով այնտեղ տեսնել հնագրական առանձնայատկութիւնները: Բայց մեզ հնարաւոր չէ եղել բոլոր արձանագրութիւնները լուսանկարել. անհատական, այն էլ սուղ միջոցների տէր վանականի կարողութիւնից վեր լինելով այդ: Պետական կամ հարուստ մեկենասների առատ օժանդակութեամբ միայն կարելի էր ըստ կարելւոյն անթերի այդպիսի գործ կատարել իբրեւ մաս արձանագրութիւնների Corpus–ի: Կը յուսանք, թէ այդ գործը պիտի կատարուի մի օր պետական յանձնարարութեամբ եւ արձանագրական գործին հմուտ մասնագէտների ձեռքով, որովհետեւ առանց արձանագրութիւնների ճիշդ վերարտադրութեան, անկարելի է ճշգրիտ (exact) եւ իրական ուսումնասիրութիւն կատարել հայ ճարտարապետական շէնքերի, քանդակագործութեան, հնագրութեան եւ մշակոյթային այլ խնդիրների մասին: Արձանագրութիւնները առաջնակարգ աղբիւրներ են եւ գիտութեան մատչելի պիտի դառնայ նոյնատիպ ձեւերով:

Միայն Պռոշեանց նուիրուած այս հատորները ցոյց են տալիս, թէ ինչքա՛ն միակողմանի եւ աղքատ է մեր հասկացողութիւնը Բագրատունեաց անկումից յետոյ Արեւելեան Հայաստանի պատմութեան մասին. կեանքը միայն քաղաքականը չէ, քաղաքականն էլ կապուած չէ միայն իշխողների, զօրապետների եւ նրանց վարած պատերազմների եւ գործերի հետ, այդ պատմութեան արտաքին կողմն է միայն: Կան ժողովրդական, կրօնական–հոգեւոր, տնտեսական, դասակարգային խաւեր եւ նրանց գործերը, որոնք իրենց դերն